ԹԵՄԱ 4

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ ԵՎ ՆՈՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

5. ԻՍԼԱՄԻ ԾԱԳՈՒՄԸ: ԱՐԱԲԱ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԻՍՊԱՆԻԱ

Խալիֆ ալ Մամունը (813-833 թթ.) հիմնեց բարձրագույն դպրոց՝ «Իմաստության տուն» անունով: Բժշկագիտության ասպարեզում անխամրելի հռչակ էր վայելում Իբն Սինան (Ավիցեննան) (980-1037 թթ.), հատկապես՝ «Կանոն բժշկագիտության» գրքով, որը միջնադարյան Եվրոպայի բժիշկների համար սեղանի գիրք էր: Այս աշխատությունը անտիկ և արևելյան երկրների բժիշկների հայացքների ու փորձի հանրագումարն էր: «Կանոն բժշկագիտությանը» մեծ ազդեցություն է թողել համաշխարհային գիտության զարգացման վրա:

Արաբներն ականավոր ճանապարհորդներ էին: Դրանցից առավել խոշորը Մասուդին է (ծ.թ.ա.–956 թթ.), որը նաև աշխարհագրագետ և պատմագիր էր: IX դ. վերջին X դ. սկզբի արաբական ակնառու պատմաբան էր Թաբարին, որը գրել է «Մարգարեների և թագավորների պատմությունը», այսինքն՝ արաբական խալիֆների պատմությունը՝ հասցնելով այն մինչև 915 թ.: Գեղարվեստական գրականության բնագավառում առ այսօր էլ մեծ հռչակ է վայելում «Հազար ու մի գիշեր» ժողովածուն, որտեղ ընդգրկված են խալիֆայության կազմի մեջ մտնող ժողովուրդների հեքիաթներն ու պատմվածքները:

Արաբական հասարակության մեջ լայն զարգացման էր հասել պոեզիան: Ֆարսի լեզվով գրվեց պարսիկ մեծ բանաստեղծ Ֆիրդուսու (935-1020 թթ.) «Շահնամեն»՝ «Արքաների գիրքը», որի մեջ բանաստեղծական շնչով արտացոլվել է Իրանի պատմությունը:

Արաբական արվեստի հատկանշական ճյուղը ճարտարապետությունն է: Արաբների կառուցած մզկիթները, պալատները, բաղնիքները, դամբարանները

և այլ շինություններ կոթողական գործեր են: ճարտարապետական առավել հին կառույցներից պահպանվել է 688 թ. Երուսաղեմում կառուցված Օմարի մզկիթը: Դա մի մեծանիստ, ութանկյուն կառույց է, որի վրա զգացվում է բյուգանդական ճարտարապետական ոճի ազդեցությունը: Բուն արաբական կառույցները նուրբ սյուներով, գեղեցիկ խոյակներով, թեթևասահ, սլացիկ շինություններ են, որոնց մեծ գրավչություն են տալիս զարդանախշերը: Մզկիթները զարդարվում էին նաև Ղուրանից վերցված գեղագիր ասույթներով: Նմանաբնույթ զարդանախշերը հատուկ են նաև արաբական մանրանկարչությանը: Մանրանկարները վերաբերում են ամենատարբեր պատմական ու կենցաղային թեմաների:

* * *

Իսլամի ուսմունքը: Մուհամեդը որոշակիորեն գտնվում էր հուդայականության և քրիստոնեության ազդեցության տակ: Մուհամեդը քաղաքից վտարեց այն հրեաներին, որոնք ընդդիմանում էին մուսուլմաններին: Յաթրիբն ընկավ մուսուլմանների հսկողության տակ և սկսեց անվանվել Մարգարեի քաղաք: Ժամանակի ընթացքում շատ բեդուին ցեղեր և ղեկավար մեքքացիներ միացան Մուհամեդին, և նրանց օգնությամբ 630 թ. Մուհամեդը գրավեց Մեքքան:

Մեքքայում Մուհամեդը մուսուլման կառավարիչ նշանակեց և վերադարձավ Մեդինա՝ ծրագրավորելու և շարունակելու հետագա պայքարը: Մինչև նրա մահը՝ 632 թ., Մուհամեդի հզոր բանակները նվաճել էին Արաբական թերակղզու կենտրոնական և արևմտյան առափնյա շրջանները:

Մուհամեդի հայտնությունները տեղի են ունեցել 610-632 թ.: Նա գրավոր ոչինչ չէր թողել, բայց հետևորդները հիշում էին նրա խոսքերը: 633 թ. Մուհամեդի գլխավոր ատենադպիրը սկսեց հավաքել մարգարեի հայտնությունները մի հավաքածուի մեջ, որը մուսուլմանների սուրբ գիրքն է և կոչվում է Ղուրան (ընթերցարան):